ԵԴ1/2743/01/26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

29 հունիսի 2026 թվական ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԵԴ1/2743/01/26 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2026 թվականի հունիսի 12-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2026 թվականի մայիսի 21-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ստացվել է Արտյոմ Զարզանդի Պետրոսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով թիվ 60231326 (ԵԴ1/2743/01/26) քրեական վարույթը:

1.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր՝ Ռ.Մարիկյան) 2026 թվականի մայիսի 25-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/2743/01/26 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2026 թվականի հունիսի 5-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/2743/01/26 քրեական վարույթն ըստ տարածքային ընդդատության Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին:

2. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Ս.Ռուշանյան) 2026 թվականի հունիսի 12-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/2743/01/26 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

3. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2026 թվականի հունիսի 22-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

4. Արտյոմ Պետրոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-րդ մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ նա *«(…) տրանսպորտային միջոցը վարել է՝ չունենալով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք և օրենքով սահմանված պատասխանատվության կիրառումից հետո մեկ տարվա ընթացքում կատարել է նույն արարքը.*

Այսպես.

*Արտյոմ Պետրոսյանը, չունենալով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք 2025 սեպտեմբերի 1-ին ժամին՝ 21:54-ի սահմաններում, Արմավիր-Երևան Մ5 մայրուղու հատվածում վարել է «***» մակնիշի, ** ** *** հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը, որի վերաբերյալ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Արմավիրի մարզի գումարտակի 2-րդ վաշտի 3-րդ դասակի պարեկ Ա.-Հ.-ի կողմից նույն օրը՝ ժամը 22:02-ին, կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն և թիվ ********** որոշմամբ Արտյոմ Պետրոսյանը տուգանվել է 50.000 ՀՀ դրամ, որից հետո նույն արարքի*

*համար օրենքով սահմանված պատասխանատվության կիրառումից հետո՝ մեկ տարվա ընթացում, Արտյոմ Պետրոսյանը չունենալով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք 2026 [թվականի] փետրվարի 6-ին ժամը՝ 06:26-ի սահմաններում, Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Երևանյան փողոցում վարել է «****» մակնիշի, ** ** *** հաշվառման համանիշի տրանսպորտային միջոցը, որի վերաբերյալ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Արմավիրի մարզի գումարտակի 1-ին վաշտի 2-րդ դասակի կրտսեր պարեկ Ս.-Կ.-ի կողմից նույն օրը ժամը 06:35-ին, կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ********** որոշմանը կից արձանագրությունը: (...)»*[1]:

5. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2026 թվականի հունիսի 5-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(...) Դատարանը, փաստում է, որ ըստ ներկայացված մեղադրանքի՝ 2025 թվականի սեպտեմբերի 1-ին Արտյոմ Պետրոսյանը Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Երևանյան փողոցում վարել է «****» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը, որի վերաբերյալ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության պարեկի կողմից նույն օրը ժամը 06:35-ին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ********** որոշմանը կից արձանագրությունը: Մեղադրյալը հայտնել է, որ ոստիկանության ծառայողն իր ավտոմեքենան կանգնեցրել է Զվարթնոց օդանավակայանի խաչմերուկից հետո դեպի Էջմիածին գնացող ճանապարհահատվածում:*

Հետևաբար, Արտյոմ Պետրոսյանին մեղսագրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ենթադրյալ հանցագործությունն ավարտվել է 2025 թվականի սեպտեմբերի 1-ին՝ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Երևանյան փողոցում, որը «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Արմավիրի մարզի տարածքում է (նշված օրենքով որպես բացառություն Երևանի տարածք նշված՝ «Զվարթնոց» օդանավակայանը Երևան քաղաքին կապող ճանապարհի երթևեկելի մասում և դրա ճամփեզրերին չի կատարվել), որը ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքն է:

Դատարանն արձանագրում է, որ թիվ ԵԴ1/2743/01/26 քրեական գործի դատական տարածքը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 1, թերթ 25:

իրավասության դատական տարածքում: Հետևաբար՝ թիվ ԵԴ1/2743/01/26 քրեական վարույթն ըստ մեղադրանքի Արտյոմ Զարզանդի Պետրոսյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով, ըստ ընդդատության պետք է փոխանցել ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: (…)»[2]:

6. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի հունիսի 12-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանն արձանագրում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, արձանագրելով, որ մեղադրյալին վերագրվող փաստական հանգամանքներում ենթադրյալ հանցանքի կատարման վայրը նշված է Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Երևանյան փողոց, հանգել է եզրահության, որ վերագրվող ենթադրյալ հակաիրավական արարքը կատարվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:*

Տվյալ դիրքորոշմանը Դատարանը հայտնում է իր անհամաձայնությունը, քանի որ Երևանյան փողոցի մի հատվածը գտնվում է Արմավիրի մարզում, իսկ մյուս հատվածը Երևան քաղաքում, հետևաբար՝ միայն մեղադրանքում նշելը, որ արարքը կատարվել է Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Երևանյան փողոցում բավարար չէ փաստելու համար, որ քրեական գործը ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքին:

Դատարանը, անդրադառնալով այն հանգամանքին, որ մեղադրյալը դատական նիստի ընթացքում հայտնել է, որ իր ավտոմեքենան կանգնեցրել է Զվարթնոց օդանավակայանի խաչմերուկից հետո դեպի Էջմիածին գնացող ճանապարհահատվածում, հարկ է համարում արձանագրել, որ դատական նիստի ընթացքում մեղադրյալի կողմից հայտնած փվյալները, որոնք արտացոլված չեն մեղադրանքի փաստական նկարագրությունում, չեն կարող հիմք հանդիսանալ քրեական գործի ընդդատությունը որոշելու համար:

Նման պայմաններում դատարանը գտնում է, որ սույն քրեական գործով հնարավոր չէ որոշել ենթադրյալ հանցանքի կատարման վայրը: Հետևաբար կիրառելի է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կանոնը, ըստ որի՝ եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել ենթադրյալ հանցանքի կատարման վայրը, ապա մեղադրանքը

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 14-17:

քննում է այն դատարանը, որի դատական տարածքում գտնվում է միևչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը:

Տվյալ դեպքում, սույն քրեական գործի ուսումնասիրության արդյունքում, պարզ է դառնում, որ նախաքննությունն իրականացրել է ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության ԶՏՀ քննության բաժինը, իսկ դատական տարածքը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանն է, հետևաբար՝ թիվ ԵԴ1/2743/01/26 քրեական գործը ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին: (...)»[3]:

Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.

7. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/2743/01/26 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

9.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ*

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 23-25:

դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»[4]*:*

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]*:*

10. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ[6]:

11. *ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ «1.Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

(…)

3. Եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված՝ ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը: (…)»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ուղարկված առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություններ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(…)

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

12. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Արտյոմ Պետրոսյանի վերաբերյալ թիվ 60231326 քրեական վարույթով նախաքննությունն իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնում:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ մեղադրյալ Ա.Պետրոսյանը նախնական դատալսումների ընթացքում հայտնել է, որ ոստիկանության ծառայողն իր ավտոմեքենան կանգնեցրել է Զվարթնոց օդանավակայանի խաչմերուկից հետո դեպի Էջմիածին գնացող ճանապարհահատվածում, գտել է, որ վերջինիս վերագրվող ենթադրյալ հանցանքն ավարտվել է Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում[7]:

- Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ Ա.Պետրոսյանին ներկայացված մեղադրանքի բովանդակությունից պարզ չէ, թե մեղսագրվող ենթադրյալ հանցանքը վերջինիս կողմից որ դատարանի դատական տարածքում է կատարվել, գտել է, որ սույն դեպքում կիրառելի է մեղադրանքի քննությունը՝ մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրի գտնվելու վայրի դատարանի կողմից իրականացնելու վերաբերյալ կարգավորումը:

Բացի այդ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը նշել է, որ դատական նիստի ընթացքում մեղադրյալի կողմից հայտնած տվյալները, որոնք արտացոլված չեն մեղադրանքի փաստական նկարագրությունում, չեն կարող հիմք հանդիսանալ քրեական վարույթի ընդդատությունը որոշելու համար[8]:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական

[7] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է արձանագրել, որ Ա.Պետրոսյանին ներկայացված մեղադրանքի համաձայն՝ վերջինիս վերագրվող արարքը կատարվել է Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Երևանյան փողոցում: Վճռաբեկ դատարանի քրեական պալատը փաստում է, որ թեև նշված փողոցը փաստացի տեղակայված է Արմավիրի մարզի Փարաքար համայնքում, սակայն դրա մի հատվածը ներառված է **Երևան քաղաքի,** մյուս հատվածը՝ **Արմավիրի մարզի Փարաքար համայնքի վարչական տարածքներում**[9]**:** Մինչդեռ, ոչ Ա.Պետրոսյանին ներկայացված մեղադրանքի ձևակերպումից, ոչ էլ վարույթի նյութերից հնարավոր չէ պարզել, թե Երևանյան փողոցի կոնկրետ որ հատվածում է կատարվել ենթադրյալ հանցավոր արարքը:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանի քրեական պալատն իր համաձայնությունն է հայտնում Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի այն հետևությանը, որ սույն վարույթի տարածքային ընդդատությունը որոշելիս պետք է հիմք ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը, համաձայն որի՝ մեղադրանքը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած մարմնի նստավայրը: Սույն վարույթով մինչդատական վարույթն իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնում, որի նստավայրը գտնվում է Երևան քաղաքում:

14. Ինչ վերաբերում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի վկայակոչած՝ մեղադրյալ Ա.Պետրոսյանի՝ վարույթի ընդդատության հարցի քննության ընթացքում հայտնած տեղեկատվությանը, ապա հարկ է արձանագրել, որ այն բավարար չէ հիմնավոր հետևության հանգելու, որ ենթադրյալ հանցանքը կատարվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում, հետևաբար տվյալ փուլում չի կարող քրեական վարույթի տարածքային ընդդատությունը որոշելու հիմք հանդիսանալ:

---

[9] Տե՛ս «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքները:

15. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/2743/01/26 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, հիմնավոր է:

16. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ԵԴ1/2743/01/26 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտյոմ Ջարզանդի Պետրոսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով թիվ ԵԴ1/2743/01/26 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Նախագահող՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ա.ՊՈՂՈՍՅԱՆ